ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025թ.

ՈՐՈՇՈՒՄ N 98-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Վայք համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 13-ի թվով 13-րդ հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:
2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի «Վայք համայնքի թիվ 3 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու, կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու և իրավաբանական հասցեն սահմանելու մասին /զեկուցող՝ Ա. Ղազարյան/:
3. Վայք համայնքի ավագանու 15.02.2022 թվականի թիվ 15-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Վայոց ձոր-2 և Վայոց ձոր-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը հաստատելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
4.Վայք համայնքի Սարավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն «Էլիտ-քնսթրաքշն» ՍՊԸ-ին սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ) օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու մասին/զեկուցող՝ Ռ. Մկրտչյան/:
5.Վայք համայնքի Հերհեր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ) օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու մասին/զեկուցող՝ Ռ. Մկրտչյան/:
6.Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային եղանակով օտարելուն համաձայնություն տալու, վաճառքի մեկնարկային գներն ու պայմանները սահմանելու մասին /զեկուցող՝ Ռ. Մկրտչյան/:
7.Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին /զեկուցող՝ Ռ. Մկրտչյան/:
8.Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի 22-րդ փողոց, 3/1 հասցեում գտնվող հողատարածքը Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցուն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու և համայնքի ավագանու 14.10.2025 թվականի թիվ 92-Ա որոշումը չեղյալ

համարելու մասին /զեկուցող՝ Ռ. Մկրտչյան/:
9.Վայք համայնքի ավագանու 2025 թվականին ընդունված թիվ 69-Ա, 77-Ա, 90-Ա և 94-Ա որոշումներում փոփոխություն կատարելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:
10.Վայք համայնքի խնամակալության և հոգաբարձության նոր հանձնաժողով ստեղծելու և Վայք համայնքի ավագանու 15.05.2024 թվականի թիվ 54-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
11. Վայք համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 21-ին ընդունված թիվ 121-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:
12.Վայք համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025թ.

ՈՐՈՇՈՒՄ N 99-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ «ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԱՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի «Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին»
N 515-Ն որոշումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի «Վայք համայնքի թիվ 3 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանել «Վայք համայնքի թիվ 3 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի «Վայք համայնքի թիվ 3 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի (նոր խմբագրություն):

3. Սահմանել այաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի «Վայք համայնքի թիվ 3 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի իրավաբանական հասցեն՝ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզ, Վայք համայնք, քաղաք Վայք, Ալավերդյան փողոց 54 շենք:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025թ.

ՈՐՈՇՈՒՄ N 100-Ն

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15.02.2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 15-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՎԱՅՈՑ ՁՈՐ-2 ԵՎ ՎԱՅՈՑ ՁՈՐ-4 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29 և 30 կետերի պահանջներով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ սահմանված կարգով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009 թվականի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի թիվ 2-8 և 2-10 եզրակացությունները, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 04.11.2025 թվականի թիվ 01/06.2/6684-2025 գրությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել ՀՀ Վայոց ձորի մարզի ք. Վայք, Ազատեկ/Հորադիս/, Արին, Զեդեա, Փոռ բնակավայրերը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Վայոց ձոր -2 և ՀՀ Վայոց ձորի մարզի Զառիթափ, Արտավան, Բարձրունի, Գոմք (Ախա,Կապույտ), Խնձորուտ, Մարտիրոս, Նոր Ազնաբերդ, Սարավան (ՈՒղեձոր), Սերս բնակավայրերը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Վայոց ձոր -4 Հերհեր և Կարմրաշեն համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագծերը գոտևորման մասով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025թ.

ՈՐՈՇՈՒՄ N 101-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ «ԷԼԻՏ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՍԵՐՎԻՏՈՒՏ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 50-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 210-րդ և 216-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 16-Ն որոշումը և 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշման 46.2. կետի դ) ենթակետն ու հաշվի առնելով «ԷԼԻՏ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերության դիմումը և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն Վայք համայնքի Սարավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող 10-039-0307-0101, կադաստրային ծածկագրով 0.02664 հա, մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը՝ տարեկան 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ վարձավճարով, սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ) 10/տասը/ տարի ժամկետով տրամադրել «ԷԼԻՏ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերությանը «Էլիտ սոլար-1» արևային ֆոտովոլտային կայանի բարձրավոլտ օդային գծերի կառուցման նպատակով:

3.Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025թ.

ՈՐՈՇՈՒՄ N 102-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՀԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՍԵՐՎԻՏՈՒՏ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 50-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 210-րդ և 216-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 16-Ն որոշումը և 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշման 46.2. կետի դ) ենթակետն ու հաշվի առնելով Վաչիկ Ասատուրի Ավագյանի դիմումը (մտ՝ Ա-86, 03.11.2025թ) և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն Վայք համայնքի Հերհեր բնակավայրի վարչական տարածքում գտնվող 10-028-0174-0022, կադաստրային ծածկագրով 0.00250 հա, մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը՝ տարեկան 25 000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ վարձավճարով, սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ) 10/տասը/ տարի ժամկետով տրամադրել Վաչիկ Ասատուրի Ավագյանին, ջրագիծ անցկացնելու նպատակով:
3.Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025թ.

ՈՐՈՇՈՒՄ N 103-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնություն տալ՝

1.1/ Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի 1-ին փողոց 9/1 հասցեում գտնվող 10-022-0035-0015 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 11112025-10-0015, գաղտ. 8LH3R7DAN6PB) բնակավայրերի նպատակային նշանակության 0.03443 հա մակերեսով հողամասը (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 486 000 (չորս հարյուր ութսունվեց հազար) ՀՀ դրամ:

1.2/ Վայք համայնքի Սարավան բնակավայրում գտնվող 10-039-0307-0102 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 04112025-10-0001, գաղտ. A11HSKUGZLFQ) գյուղատնտեսական նպատակային նշանակության 2.37332 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ վարելահող) գյուղատնտեսական գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի

մեկնարկային գինը սահմանել 7 191 200 (յոթ միլիոն մեկ հարյուր իննսունմեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025թ.

ՈՐՈՇՈՒՄ N 104-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-
րդ հոդվածի 1-ին մասի 29-
րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին
կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3-րդ հոդվածի 9-րդ մասով
, Կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» N 987-Ն որոշման 9-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն՝
1.1 Տալ համաձայնություն Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Զեղեա բնակավայրում գտնվող, 10-023-0308-0010 կադաստրային
ծածկագրով, 0.24864 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության (հողատեսքը՝
այլ) հողամասի նպատակային նշանակությունը փոխել որպես հատուկ նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ ռազմական նշանակության հողեր:

1.2 Տալ համաձայնություն Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Հերհեր բնակավայրում գտնվող, 10-028-0172-0032 կադաստրային
ծածկագրով, 0.04517 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության (հողատեսքը՝
այլ) հողամասի նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողեր:

2. Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025թ.

ՈՐՈՇՈՒՄ N 105-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏԵԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 22-ՐԴ ՓՈՂՈՑ, 3/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14.10.2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 92-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 75-րդ հեդվածով, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 685-699-րդ հոդվածների պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Անվավեր ճանաչել Վայք համայնքի ավագանու 2025 թվականի հոկտեմբերի 14-ի «Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի 22-րդ փողոց, 3/1 հասցեում գտնվող հողատարածքը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն նվիրաբերելու մասին» թիվ 92-Ա որոշումը:

2.Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի 22-րդ փողոց, 3/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.0042 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը անհատույց օգտագործման իրավունքով, 15 (տասնհինգ) տարի ժամկետով հատկացնել Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցուն՝ երիցատուն կառուցելու նպատակով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025թ.

ՈՐՈՇՈՒՄ N 106-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԹԻՎ 69-Ա, 77-Ա, 90-Ա ԵՎ 94-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Վայք համայնքի ավագանու 2025 թվականի օգոստոսի 25-ի՝ «Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը «Էլիտ-քնսթրաքշն» ՍՊԸ-ին սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ) օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու և համայնքի ավագանու 14.06.2024 թ-ի թիվ 63-Ա որոշումը չեղյալ համարելու մասին» թիվ 69-Ա որոշման բովանդակության 1-ին կետում նշված «2025» թիվը փոխարինել «2024» թվով:
2. Վայք համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 12-ի և հոկտեմբերի 14-ի՝ «Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող հողատեսքերը համայնքային սեփականություն ճանաչելու և կադաստրային քարտեզում ուղղում կատարելու մասին» թիվ 77-Ա և 94-Ա որոշումների հղման մեջ «Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ. «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը» հաստատելու մասին» N 186-Ն հրամանով հաստատված հրահանգի 9-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերով» բառերը փոխարինել «ՀՀ Կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ 698-Ն որոշմամբ սահմանված կարգով» բառերով:
3. Վայք համայնքի ավագանու 2025 թվականի հոկտեմբերի 14-ի՝ «Վայք համայնքում հողի կադաստրային արժեքի փոփոխմամբ պայմանավորված գործող վարձակալության, կառուցապատման և սերվիտուտի իրավունքի տրամադրման պայմանագրերում վարձավճարի (վճարի) փոփոխություն կատարելու մասին» թիվ 90-Ա

որոշման հղման մեջ «19» թիվը փոխարինել 1» թվով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025թ.

ՈՐՈՇՈՒՄ N 107-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15.05.2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 54-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 631-Ն որոշմամբ.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Ուժը կորցրած ճանաչել Վայք համայնքի ավագանու 15.05.2024թ. թիվ 54-Ա որոշումը:
2.Ստեղծել Վայք համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով:

3. Հաստատել համայնքի ղեկավարի առաջարկած խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի հետևյալ կազմը.
3.1.Նորայր Հովակիմյան-աշխատակազմի զարգացման ծրագրերի, սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի պետ -հանձնաժողովի նախագահ,
3.2.Անուշ Ղազարյան-/աշխատակամի քարտուղար/-հանձնաժողովի քարտուղար,
3.3.Շուշանիկ Ասլանյան-/իրավաբան/-հանձնաժողովի անդամ,
3.4.Սուսաննա Կոստանյան -/մանկավարժ-հոգեբան/ -հանձնաժողովի անդամ,
3.5.Ալմաստ Սաֆարյան -«Հույս 98» ՀԿ-ի նախագահ - հանձնաժողովի անդամ,
3.6.Խաչիկ Մկրտչյան -ՄՄԾ Վայքի տարածքային կենտրոն -հանձնաժողովի անդամ,
3.7.Լիլիթ Արարատյան -հոգեբան-հանձնաժողովի անդամ,
3.8.Հրաչիկ Մանուչարյան-Վայք համայնքի ավագանու անդամ /բժիշկ/-հանձնաժողովի անդամ,

3.9.Հովսեփ Զաքարյան- աշխատակազմի աշխատակից/իրավաբան/-հանձնաժողովի անդամ,
3.10.Եվա Ջանոյան- աշխատակազմի զարգացման ծրագրերի, սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի առաջատար մասնագետ-հանձնաժողովի անդամ,
3.11.Սոնա Զաքարյան-մանկական զարգացման հիմնադրամի սոցիալական աշխատող-հանձնաժողովի անդամ:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025թ.

ՈՐՈՇՈՒՄ N 108-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԹԻՎ 121-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի դրույթներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Վայք համայնքի ավագանու 2022 թվականդեկտեմբերի 21-ի՝ «Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը վարձակալության և/կամ/ կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար մրցույթային հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կազմից աճուրդավար և արձանագրող նշանակելու և Վայք համայնքի ավագանու 2021 թվականի սեպտեմբերի 7-ի թիվ 41-ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ121-Ա որոշման բովանդակության 1-ին կետը շարադրել ստորև բերված նոր խմբագրությամբ, իսկ 2-րդ կետում նշված բառերը ամբողջությամբ հանել՝

«1. Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման և անցկացման համար ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով.

- Հանձնաժողովի նախագահ-աճուրդավար - Սամվել Իխտիարյան (Վայքի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի պետ),
- Հանձնաժողովի անդամ- արձանագրող - Անուշ Ղազարյան (աշխատակազմի քարտուղար),
- Հանձնաժողովի անդամ-Ռոման Մկրտչյան (Վայքի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետ),

- Հանձնաժողովի անդամ-Արամ Հովսեփյան (Վայքի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ),
- Հանձնաժողովի անդամ- Գարիկ Գևորգյան (Վայքի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ),
- Հանձնաժողովի անդամ-Մեսրոպ Մեսրոպյան (Վայք համայնքի ղեկավարի օգնական),
- Հանձնաժողովի անդամ- Վարդան Կոստանյան (համայնքի ավագանու անդամ)»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025թ.

ՈՐՈՇՈՒՄ N 109-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի դեկտեմբերի 11–ին, ժամը՝ 18:30–ին:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ